


238



2304-10

ՀՈՒՅՈՒԹԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԵՏՈՒՏ

№ 40 ՀԵՐԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 40

ԾՐԱԳԻՐ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ

4(07)  
5-89

ՈՒՍՈՒԹԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԵՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1987

407)

Տ-89

ԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ե ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ  
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ԿՈՂԾՈՒՑ

## ԾՐԱԳԻՐ

### ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Լեզվաբանության ներածությունն ավանդվում է առաջին կուրսում (լ կիսամյակում) և կազմում է բարձր կուրսերում կարղացվող լեզվաբանական գիտակալինների՝ առանձին կոնկրետ լեզուների պատմության և քերականության ներածությունը:

Դրա համար ել այս առարկան պետք է ապահովի ուսունողին մի շարք կոնկրետ իրողությունների իմացությամբ, գործուք անհրաժեշտ են նրա կողմից հետազայում ուսումնասիրվելու թվուածանական առարկաների ավելի խորը մշակման համար, և տա՞ ընդհանուր մեթոդաբանական ստհմանումներ նրա հետազաշխատանքների նպատակների համար:

2. Ծրագիրը հանդիսանում է ընդհանուր լեզվագիտության կուրսի կառուցման մի փորձ հիմնված մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններում լեզուների մասին տրված դրույթների և խորհրդացին լեզվաբանության—և առաջին հերթին ակադեմիկոս Ն. Յա. Մառի լեզվի նոր ուսմունքի—կոնկրետ նվաճումների վրա:

Ծրագիրն ունի հետևյալ բաժինները՝

I. Ներածություն, II. լեզվի կառուցվածքը, III. լեզվաստեղծական պրոցեսի միասնության ուսմունքը, IV. գրի պատմությունը, V. լեզվաբանության պատմության համառոտ ուրվագիծը:

1. «Ն ե ե ր ա ծ ու թ յ ո ւ ն ն ա Ռ ւ ս ա ն ո ղ ի ն պ ե տ ք է տա ընդհանուր պատկերացում կուրսի անելիքների մասին, լեզվաբանության՝ մյուս գիտակալինների միջև ունեցած տեղի մասին, նրա

Թամգմ. Խմբ. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Սքրագրիչ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավիտի լիազոր կ-8264 Պատվեր № 51 Տիրաժ 1200

Հանձնված և արտադրության 9 նոյեմբերի 1937 թ.

Ստորագրված և սպելու 27 նոյեմբերի 1937 թ.

Ուսուցիչների վարակորման Խնամիտութի ավարտն Յերևան Մայրակ Փագոս № 17



300

38

հիմնական բաժինների, նրա վոչ միայն զործնական, վորպես լեզվի գծով կատարվելիք տմեն տեսակ աշխատանքի բազայի համար անհրաժեշտ նշանակության, այլև մարդկային հասարակության պատմության կարևորագույն աղբյուրներից մեկի, նշանակության մասին: Ճիշտ նույնպես նա պետք է տա ուսանողին վերջինիս համար նոր դիսցիպլինի առարկայի վորոշումը, ինպիսի գիտական զորոշումը: Այսպիսով «Ներծությունը» սեղմ ձևով տալիս ե ուսանողին այն սահմանումները, վորոնք հետագայում պետք ե ծավալին նրանց առաջ կոնկրետ մատերիալի ամբողջ բազմազանությամբ:

Ա. Յերկը ուրդ բաժինը՝ «Լեզվի կառուց վածքը»— կազմում ե վոչ միայն ծրագրի մեթոդաբանության կարեռագույն բաժին, այլև լեզվի կատակցությամբ ուկնողինների հետազայում ունենալիք բոլոր աշխատանքների յուրատեսակ ներածություն: Այսբաժնի հիմնական խնդիրն ե՝ ունկնդրի առաջ յերկան հանել լեզվական յերկույթներն իրենց բովանդակ բարդությումը, տալով նրանց ծագմաբանական բացատրությունը, կենտրոնացնել նրա ուշագրությունը իմաստաբանական, հնչյունաբանական և քերականական կողմի վրա և միաժամանակ նրանց տալ լեզվաբանական աշխատանքի տարրելի հաստատուն գիտելիքներ, նրա հիշողության մեջ ամրապնդել լեզվաբանական տերմիններանությունը, առանց վորի միտք չունի վոչ մի հետազա աշխատանք ինպիսի գծով: Լեզվի կառուցվածքի ուսումնասիրությունն ուսանողին հանդիցնում ե լեզվի ու մտածողության պատմության գիտելիքներ, այդ ուսումնասիրությունը նախապատճենատում ե նրան գիտակցորեն յուրացնելու ծրագրի Արքանում շարադրված լեզվաբանության փիլիսոփայության հիմնական դրույթները:

Ա. Յերբը ուրդ բաժինը՝ «Լեզվաստեղծման ուղղությունը միասնության ուսամուռնքը» ունկնդրին առաջնորդում ե գեղի լեզվի գիտության հիմնական պրոբլեմների, լեզվի ծագման ու զարգացման պրոբլեմների շրջանը: Լեզվի, մատածողության ու հասարակության մարքս-լենինյան կոնցեպցիայից բղխող վորոշումների յուրացումը հնարավոր և լեզվաբանական կոնկրետ մատերիալիներին ունկնդրի կողմից միայն բավականչափ տիրապետելու դեպքում, դրա համար ծրագրիը հատուկ

ուշադրություն ե դարձնում այն բանի վրա, վոր ունկնդիրները յուրացնեն փաստական տեղեկությունները լեզուների մասին՝ նրանց անցյալում և ներկայում: Վոր քննադատորեն ծանոթանան լեզուների գոյություն ունեցող դասակարգություններին, բարբառագիտությանը և բարբառագրությանը, ոգտակար և նույնականական աշխարհի, ԽՍՀՄ-ի լեզվաբանական քարտեզներին, ինչպես և բարբառագրուկան քարտեզների որինակներին:

Ունկնդիրը վոչ թե վերացականություն, մեթոդաբանական ընդհանուր ձևավորումներից կտրված, այլ կոնկրետ կերպով, բազմաթիվ փաստերի վրա պետք է յուրացնի միտմական լեզվաստեղծական որոցեսի ուսմունքը, ինպիսի ու մտածողության ծագման ուսմունքը բարդարդկային հասարակության ծագման որոցեսի, ու աշխատանքի որոցեսի բարդացման մեջ, ինպիսի փոխությունների սոցիալ-տնտեսական պայմանավորվածության (վերջին հաշվով) ուսմունքը, այնպիսի հիմնական հասկացողությունների բովանդակության փոփոխության ուսմունքը, ինչպատճին և «Լեզվուն» և «բարբառը» հասարակության զարգացման տարրեր ետապներում: Լեզվին, վորպիս վերնաշնորհի, հատուկ հետ մնալը բաղայի զարգացումից: Լեզվի մեջ փորոշ ստագիայի (հասարակական պատմական փորմացիայի), ավելի վաղ շրջանի ստագիաների վերապրումների տոկայությունը ունկնդրին հանդիցնում է հասկանալու պատմականության պարտադրականությունը՝ լեզվի ուսումնասիրության մեջ:

Դասախոսը լեզվաբանության հիմքը կազմող հասկացությունների բացատրության կադակցությամբ պետք ե մերկացնի այն լեզվաբանական թեորիաները, վորոնք տալիս են լեզվի մեջ գոյություն ունեցող պատմական պրոցեսի աղավաղիած նկարագրը և փորոնք կեղծում են լեզվաբանական հիմնական հասկացությունները բուրժուազիայի սպահն (ինչպես որինակ, լեզվի և սասայի նույնացումը մի քանի լեզուների, վորպիս «ուսայորեն մաքուր», «ընտրյալ լեզուների առանձնացումը, լեզվի պատմության մեկնաբանումը «ժողովրդական վորության մեջ» և այլն): Խորհրդային Միության մեջ լեզուների ընտագմատում կատարված կուլտուրական ու պակային շինարարության ուսումնասիրությունը հնավագորությունն է ըն-

ձեռում նշելու լիդուների մերձեցման ուղիները՝ ձևով, աղքային  
և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրաների ծաղկման  
միջոցով՝ մի միանական համաշխարհային լեզու ապագա  
հասարակության մեջ (ընկ. Ստալինի ճառը կուսակցության  
XVI համագումարում):

IV. «Գրի պատմությունը» առանձին բաժին գարձնելու  
գրագաղատառն այն է, զոր գիրն իր պատմության մեջ կրկնում և  
լեզվի հետ ունեցած ընդհանուր ստադիաները. այդ պատճառով  
«Գրի պատմություն»-ը նպատակահարժար է ուսումնասիրել  
միայն այն բանից հետո, յերբ ուսանողը կյուրացնի պատմա-  
կան պրոցեսի հիմնական որինաչափությունները լեզվի մեջ:

Անհրաժեշտ է, զոր գասախոսը հնարավորության չափ կոնկ-  
րետացնի այս բաժնում հաղորդած տեղեկությունները ունկընդ-  
րին մատչելի նյութի վրա: Շատ շահավետ է ոգտվել զրի պատմու-  
թյանը վերաբերող զիտողական պիտույքներից, աղյուսակներից  
և նկարներից:

V. Լեզվագիտության պատմության համառոտ ության համառոտ  
ուրվագիծը դրված է կուրսի վերջում. լեզվաբանության  
հիմնական պրոբլեմների զիտական լուծումների յուրացումով  
միայն ունկնդիրը կարողանա քննադատորեն ըմբռնել լեզվի  
զիտության դարձացումը: «Լեզվաբանության ներածության»  
այս բաժինը կարելի յէ բաց թողնել ֆիլոլոգիական ֆակուլտե-  
տների այն բաժիններում, զորտեղ կարգացվում է «Լեզվագիտության  
պատմության առանձին դասընթացը»:

## Բ) ԺՐԸԹԻՔ

(66 ժամ 2-րդ կիսամյակում)

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Լեզվի զիտությունը և նրա խնդիրները: Լեզվաբանու-  
թյան առարկան: Լեզվի զիտության բաժինները: Լեզվաբանու-  
թյան առարկան: Լեզվի մյուս գիտությունների մեջ:

## II. ԼԵԶՎԻ ԿԱՌՈՒԹՅՎԱԾՔԸ

2. Բառագիտություն և իմաստաբանություն.  
բառը և նրա իմաստը: Բառի կոնկրետ և վերացական իմաստը:  
Վերացական իմաստների ծագումը: Մենիմաստ (МОНОСЕМИЯ) և  
բազմիմաստ (ПОЛИСЕМИЯ) բառեր: Կոնտեկստի նշանակությու-  
նը: Հասկացություն տերմինի մասին: Բառի ուղղակի և փոխա-  
բերական նշանակությունը: Հոմանիշներ (СИНОНИМЫ) և հակա-  
նիշներ (АНОНИМЫ): Հասկացություն իդիոմների մասին: Բառի  
սոցիալական գունավորումը: Բառի ստուգաբանական նշանա-  
կությունը և նրա տարբեր բացարձությունները: Այսպես  
կոչված «ժողովրդական ստուգաբանության» յիրեւոյթները:

Բառի իմաստի փոփոխությունները: Ֆունկցիոնալ (գործառ-  
նական) իմաստաբանություն:

Բառերի պատճական գարզացումը և բառապաշտիքի գարզա-  
ցումը. հասկացություն նորաբանության (նեղողիղմ) և հնարա-  
նության (արեալիղմ) մասին: Բառերի տարբերակումը և նրա  
պատճառները: Բառային փոխառությունների և բառապատճենում-  
ների (կալկերի) հարցը:

3. Հնչյունաբանություն: Լեզվի հնչյունները: Լեզվի  
փորձարանները (որգանները): Հնչարտաբերումը և լսողական  
ընկալումը: Հնչյունների վորակական տարբերությունները. ձայ-  
նավորներ և բաղաձայններ: Ձայնավորների և բաղաձայնների  
դասակարգության կարեւորագույն սիստեմները: Հնչյունների  
տարբերությունը լստ ամանակի, բարձրության և ուժի: Հըն-  
չյունները կապակցված խոսքի մեջ: Վանկ: Շեշտ: Առողանում:  
Առնմանումը, տարնմանումը և այլ յերեսույթները: Հնչյուն և  
հնչույթ (Փոնեմա): Հնչույթների և գիֆուզ հնչյունների առա-  
ջացումը մարդկային լեզվի գարզացման պրոցեսում: Հասկացու-  
թյուն հնչույթների սիստեմի մասին: Տարբեր լեզուների հըն-  
չույթների սիստեմները:

Լեզուների հնչյունական սիստեմի պատճական փոփոխու-  
թյունները: Հնչյունական փոփոխությունների հիմնական տիպերը:

Տառի և հնչյունի հարաբերակցությունը: Հասկացություն  
ուղղագրության և նրա տարբեր օկզունկքների մասին: Հասկացու-  
թյուն ուղղախոսության (օրֆօնիա) մասին: Հնչյունաբանական

տառագարձությունը և նրա ամենատարածված սիստեմները: Հարբեթաբանության մեջ կիրառվող վերլուծական այրութենը և տառադարձության նշանները:

Զեաքանություն և շարահյուսություն: Հնչյունաբանությունը, ձևաբանությունը և շարահյուսությունը և նրանց հարաբերակցությունները: Քերականության և բառագիտության հարաբերակցության հարցը:

Քերականական ձև և քերականական իմաստ: Հասկացություն արմատի, հիմքի, ածանցների մասին: Լեզվի քերականական միջոցները (ածանցում, հիմքերի թեքում, բարդացում, բառաշարք, շիշտ և առողանություն), այսպես կոչված «սպասարկու» բառեր հասկացության քերականական կատեգորիայի մասին: Քերականական կատեգորիաների պատմական փոփոխելիությունը:

Հասկացություն առանձին բառի, վորպես ձևաբանական միավորի մասին: Բառակազմության սկզբունքները տարբեր սիստեմների լեզուների մեջ: Ձերանական պրոցեններ առանձին լեզվի մեջ (վերատարբերում—պերեզալոցիոն), պարզացում, կցում (արտաքուստ միացում) և այլն:

Խոսքի մասերը և նրանց պատճենագումը: Ակադեմիկոս Մասի ուսմունքը խոսքի մասերի և քերականական կատեգորիաների առաջացման մասին:

Հասկացություն նախադասության մասին: Նախադասության վորոշումները տրամաբանական, հոգեբանական և ձետկան քերականության մեջ և նրանց քննադասությունը: Նախադասության անդամներ և խոսքի մասեր: Նախադասության անդամների բաժանումը սկզբնական անանջատ «բառ-նախադասությունից»:

Շարահյուսական կառուցվածքի հասկացությունը: Շարահյուսական կառուցվածքները տարբեր սիստեմների լեզուների մեջ: Նախադասության ականքի և պասիվ կառուցվածքը: Անդեմ նախադասությունները: Պարզ և բարդ նախադասություն: Նախադասության առարեր տեսակների պատմական հաջորդականությունը:

Հասկացություն լեզվի համադրական (սինթետիկ) և վերլուծական կառուցվածքի մասին:

### III. ԼԵԶՎԱՍԵՂՆԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

5. Աշխարհի լեզուները, նրանց հիմնական սիստեմները և տիպերը, տեղեկություններ նրանց աշխարհագրական տարածման մասին:

Աշխարհի լեզվաբանական քարտեզի փոփոխությունները և նրանց պատմական պատճառները: Հասկացություն «կենդանի» և «միուած» լեզուների մասին: «Մեռած» լեզուներից ամենակարևորները և նրանց հարաբերությունները «կենդանի» լեզուների հետ (նրանց կառուցվածքի նմանությունը և տարբերությունները, նրանց աշխարհագրական տարածումը):

Համեմատական-պատճառիան մեթոդը լեզվաբանության մեջ և լեզուների գասակարգումը: Ծննդաբանական գասակարգումը: Տիպաբանական գասակարգություններ, այսպես կոչված ձևաբանական գասակարգում (անշատական, կցական (ացլուտինատիվնե), բաղմահամադրական և թեքական լեզուներ), նրա անբավարությունը, տիպաբանական գասակարգությունների նորագույն փորձերը: Լեզուների ավանդական գասակարգությունների քննադատությունը լեզվաստեղծման պրոցեսի միասնության ուսմունքի լույսի տակ: Լեզվագիտության ուսուայիական թեորիան և նրա մերկացումը: Հասկացություն ստաղիաների ու սիստեմների մասին:

6. Լեզվի ծագման պրոբլեմը և նրա նշանակությունը (հարցի պատմության համաստու ուրվագիծը): Լեզուն և մտածողությունը: Նրանց փոխադրձ հարաբերությունը և նրանց կապը հասարակական բազմիւթյան հետ: Լեզվի զարգացման հնագույն ստադիաները: Կիննետիկ և հնչական լեզու:

7. Լեզուն վորպես պատմականորեն—զարգացող յերևոյթ: Լեզվի առանձին կողմերի փոփոխությունների փոխադրձ կապի հարցը և այս հարցի լուծումը տարբեր լեզվաբանական ուղղություններում: Լեզվի պատմության իդեալիստական և գանհիկ մատերիալիստական մեկնաբանությունները: Լեզվի փոփոխությունների կապակցությունը: Լեզվի փոփոխությունների կապակցությունը հասարակական ձեերի բնագավառում կատարվող փոփոխությունների, նյութական կուլտուրայի և գաղափարախոսու-

թյան հետ: Լեզվի՝ վորպիս պատմական աղբյուրներից մեկի՝ նշանակությունը: Լեզվաբանական հներաբանության կառուցման փորձեր:

8. Լեզվի զարգացման հիմնական որինաչափությունները: Լեզու և աղբություն: Լեզու և դասակարգ: Դրական լեզուներ: Լեզուների փոխազգեցությունը պատմական զարաշրջաններում: Լեզուների հերթափոխությունը, նրա պատճառները և ձևերը: Ազգային փոքրամասնությունների, գաղութային և կիսազգության ժողովուրդների լեզուները կտպիտալիստական հասարակության մեջ: Յերկիղզվություն: Լեզուների խառնվելը և դրա պատմական հիմունքները: Այսպիս կոչված «միջազգային լեզուներ» (բնական և արհեստական): Ստալինը ապագա կոմունիստական հասարակության միասնական լեզվի մասին:

9. Լեզու և բարբառ: «Բարբառ» հասկացության սոցիալապատմական բովանդակիությունը տարբեր հասարակական ֆորմացիաներում: Հասկացություն բարբառագիտության մեթոդների և բարբառագրության մեթոդիկայի մասին. (համեմատական պատմական բարբառագիտություն, լեզվաբանական աշխարհագրություն, սոցիալական բարբառագրության փորձեր):

10. Ազգային լեզուների ծաղկումը Խորհրդային Միության մեջ հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում զորպիս լինինյանստալինյան ազգային քաղաքականության իրականացման արդյունք:

Ազգային շնորհարության հիմնական լինինյան լեզուների բնագավառում Խորհրդային Միության մեջ (գրական լեզուների զարգացումը, տերմինարանության ստեղծում, միջազգառումներ գրագիտության բնագավառում): Պայքար մեծապետական շովինիզմի և տեղային նացիոնալիզմի դեմ լեզվի հարցերում:

#### IV. ԳԻՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

11. Գրի ծագումը և նրա հարաբերությունը լեզվի նկատմամբ: Հիմնական ետապները գրի զարգացման մեջ (նախագրային նշաններ և պատկերագրություն, գաղափարագրություն (թղեռգրաֆիա) հնչական գիր): Հնչական գրի զարգացման կարևորագույն ետապները: Այրուբենի ծագումը:

Այրուբենի հաղորդման ուղիները և այդ հաղորդման սոցիալական պատճառները: Գրի ձեերի փոփոխությունը: Հասկացություն հներագրության (ոլոցգրաֆիա) մասին:

Գրի և հնչման տարրերության պատճառները: Ուղղագրական նորմի ստեղծումը և նրա նշանակությունը:

#### V. ԼԵԶՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՒՐՎԱՐԴՅԸ

12. Լեզվի գիտության պատճությունը: Լեզվաբանության ինքնուրույն գիտություն դառնալը: Հումքութը և ԽIX դարի լեզվաբանության փիլիսոփայությունը: Համեմատական—պատմական լեզվագիտության զարգացություն XIX դարում: Մարքսի և Էնգելսի կողմից համեմատական—պատմական լեզվագիտությանը տված գնահատականը:

Թեորիական լեզվագիտությունը 20-րդ դարի սկզբում: Որթոդոքս կոմպարատիվիզմի գրութների վերանայումը: Նորագույն ուղղություններ արևմտայելվրոպական լեզվաբանության մեջ և նրանց քննադատությունը:

Թեորիական լեզվագիտությունը Խորհրդային Միության մեջ և նրա նվաճումները: Լեզվի նոր ուսմունքը (ակադեմ. Մառի հարեթական թեորիան): Ազգային-կուլյատուրական շինարարության նվաճումները և լեզվագիտական թեորիայի ու պրակտիկայի մոտակա խնդիրները Խորհրդային Միության մեջ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր լեզվաբանության գասընթացն առ այժմ չունի միասնական ձեռնարկ: Դասախոսը պետք է ունիսդրին նշի մի քանի ձեռնարկներ, զատելով զրանցից առանձին գլուխներ և դրանք լրացնելով իր գուսախոսությունների գրանցումով:

1. ՄԱՐՔՍ, ԵՆԳԵԼԸ, ԼԵՆԻՆ, ՍՏԱԼԻՆ.—Լեզվի և մտածության պրոլետարի մասին (Маркс, Энгельс, Ленин, Сталин—О проблемах языка и мышления, 1933 г. известия ГАИМК)

2. ԵՆԳԵԼԸ.—Ֆրանկուրի բարբառը (Франкский диалект) 1935.

3. ԵՆԳԵԼԸ.—Աշխատանքի մասնակցությունը կապկի մար-

դացման մեջ, հայեր, հրատ. Կուսիրատ 1933 թ. Յերևան, կամ  
«Բնության Դիմելիտիկա», եջ 79—93., հայերեն հրատ. Կուսիրատ,  
1936, Յերևան:

4. ՄՏԱԼԻՆ.—Մարքսիզմը և աղգային-գաղութային հարցը:  
Հայեր, հրատ. Կուսիրատ, 1935, Յերևան:

5. Ա.ՖԱՐԳ.—Լեզուն և հեղափոխությունը (Язык и Рево-  
люция, 1930 г.)

6. ՄԱԹ, Ն. ՅԱ.—Ընտիր աշխատություններ դասախոս  
կողմից նշված հոդվածները (Марр Н. Я. Избранные работы—  
статьи по указанию преподавателя)

7. ՄԵՇՉԱՆԻՆՈՎ, Ի. Ի.—Լեզվի նոր ուսմունք (Мещани-  
нов, И. И.—Новое учение о языке, 1936 г.)

8. ՈՒՇԱԿՈՎ, Դ. Ի.—Լեզվի գիտության համառոտ ներա-  
ծություն. 1929 (գլխավորապես III, IV, V, VI VII, գլուխները—  
ծրագրի 3-րդ, 4-րդ, 5-րդ բաժինների համար (Ушаков, Д. И.—  
Краткое введение в науку о языке, 1929 г.—Преимущест-  
венно главы III, IV, V, VI, VII, для раздела 3-го 4-го 5-го  
программы):

9. Դ. ՍՈՍՍՈՅԱՆԻՔ.—Ըստհանուր լեզվաբանություն գանձն-  
թաց, 1933 թ.—գլխավորապես ներածության VI և VII գլուխ-  
ները ծրագրի II բաժնի համար, չորրորդ մասը՝ ծրագրի 9-րդ  
բաժնի համար (Де-Соссюр—Курс общей лингвистики):

10. ՄԵՊԻՔ.—Լեզու, Մ. 1934 (գլխավորապես IV, V գլուխ-  
ները ծրագրի 4-րդ բաժնի համար, IV և X գլուխները ծրագրի  
5-րդ բաժնի համար (Сепир—Язык):

11. ՎԱՆԴՐԻԵՍ.—Լեզու. 1937, (առավելապես ծրագրի  
2, 3, 4, և 5 բաժինների համար)—Вандриес—Язык.

12. Большая Советская энциклопедия (Лингвистичес-  
кие статьи по указанию преподавателя).

Խմբագիր՝ պրոֆ. ԱՎԱՆԵՍՈՎ

«Ազգային գրադարան»



NL0239538

